<Յունիբանկ> ԲԲԸ 2021թ. գործունեության վերաբերյալ Վարչության

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր, գործընկերներ, տիկնայք և պարոնայք,

Ողջունում եմ ձեզ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին և շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ մասնակցության համար: Թույլ տվեք ներկայացնել Յունիբանկի 2021 թվականի գործունեության համառոտ հաշվետվությունը:

2021 թվականին Յունիբանկը նշեց իր հիմնադրման 20-ամյակը, այս տարիների ընթացքում իրեն դրսևորելով որպես դինամիկ զարգացող ունիվերսալ ֆինանսական կազմակերպություն, կայուն և վստահելի գործընկեր:

2021 թվականին արդյունավետ կառավարման գործիքների օպերատիվ կիրառման շնորհիվ Բանկը բավական հաջողությամբ հաղթահարեց նախորդ տարվա տնտեսական ճգնաժամը: Բանկի ֆինանսական կայունության և ներդրումային գրավչության բարձրացումը, ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործումը և ակտիվների որակի բարելավումը շարունակել են առաջնահերթ լինել Բանկի գործունեության մեջ: Միևնույն ժամանակ, Բանկի գործունեությունը չի սահմանափակվել միայն վերը նշված խնդիրների լուծմամբ. մեծ ուշադրություն է դարձվել ներքին հսկողության համակարգին՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, համապատասխանության և մատուցվող ծառայությունների որակի բարելավման ոլորտում:

<u>Կարևոր իրադարձությունները</u>

- ✓ Կատարելով հերթական քայլը հայաստանյան թողարկողի արժեթղթերում օտարերկրյա ներդրումների խթանման ուղղությամբ՝ Յունիբանկը թողարկեց շուրջ 1,1 մլրդ դրամ ծավալով արտոնյալ բաժնետոմսեր՝ հաստատագրված տարեկան եկամտաբերությամբ: Բանկը, լինելով պարտատոմսերի շուկայի ակտիվ մասնակից, ընդհանուր առմամբ իրականացրել է պարտատոմսերի 18 թողարկում և տեղաբաշխել շուրջ 4,3 մլրդ դրամ և 39,5 մլն դոլար: Սանկտ Պետերբուրգում կայացած պարտատոմսերի կոնգրեսում Յունիբանկի պարտատոմսերի Մոսկվայի բորսայում փոխցուցակումը ճանաչվել է Հայաստանի լավագույն գործարք:

- ✓ Շարունակվել են աշխատանքները Բանկի թղթակցային հարաբերությունների աշխարհագրության ընդլայնման ուղղությամբ: Միջազգային վճարային գործարքների հաջողության գրավականը պրոֆեսիոնալ անձնակազմն է, օպերատիվությունը և մրցունակ սակագները: Նախորդ տարվա ընթացքում Բանկում SWIFT փոխանցումների ծավալն աճել է ավելի քան 20%-ով: Visa միջազգային վճարային համակարգի կողմից Յունիբանկին շնորհվել է մրցանակ անդրսահմանային գործարքների ծավալի համար:

- ✓ Մասնաճյուղային ցանցի զարգացման քաղաքականության շրջանակներում Բանկը բացել է «Արին Բերդ» և «Մոսկվա» մասնաճյուղերը, «Տաշիր Կենտրոն», «Տերյան», «Ամիրյան», «Երիտասարդական» մասնաճյուղերը հիմնանորոգվել և արդիականացվել են, «Ալավերդի» մասնաճյուղի գործունեությունը դադարեցվել է՝ ակտիվները և պարտավորությունները փոխանցվել են «Վանաձոր» մասնաճյուղին: Միաժամանակ

շարունակական աշխատանքներ են տարվել բջջային հավելվածի ֆունկցիոնալության ընդլայնման ուղղությամբ, UniMobile-ի օգտատերերի շրջանակը 2020 թվականի համեմատ գրեթե եռապատկվել է:

- ✓ 2021 թվականի դեկտեմբերին Moody's Investors Service միջազգային վարկանիշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկային վարկանիշը B2 մակարդակում՝ կայուն կանխատեսմամբ:

- ✓ Յունիբանկը հաջողությամբ անցել է PCI DSS պահանջներին համապատասխանության տարեկան հավաստագրման աուդիտը և ISO 27001:2013 միջազգային ստանդարտին համապատասխանության վերահավաստագրումը: Տեղեկատվական անվտանգության սպառնալիքների և զեղծարարության դեպքերի աճի ներկայիս պայմաններում Բանկն արդյունավետորեն իրականացնում է իր տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության, հաճախորդների և գործընկերների տվյալների գաղտնիության ապահովման ոլորտում անձնակազմի գիտելիքների բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

<u>Համառոտ ֆինանսական ցուցանիշների մասին</u>

Համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների, Բանկն ամփոփել է 2021 թվականը հետևյալ ցուցանիշներով՝

- ✓ **ԱԿՏԻՎՆԵՐԸ** կազմել են 252.8 մլրդ դրամ, մեկ տարում ավելանալով 6.2%-ով, Հայաստանի բանկային համակարգի ակտիվների աճը կազմել է 6.4%:

ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ կազմել են 135.4 մլրդ դրամ, կամ ընդհանուր ակտիվների 54%-ը: 2020թ. համեմատ 13.5%-ով նվազումը տեղի է ունեցել վարկավորման զուսպ քաղաքականության հաշվին:

- ✓ **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** աճել են 9%-ով՝ կազմելով 222.1 մլրդ դրամ: Համակարգի պարտավորությունների աճը կազմել է 6.7%:
- ✓ **ԱՎԱՆԴՆԵՐԻ** պորտֆելը կազմել է 193.6 մլրդ դրամ: Ավանդային բազայի աճը տեղի է ունեցել կորպորատիվ հաճախորդների ցպահանջ հաշիվներին միջոցների ակտիվ ներհոսքի հաշվին:
  Թողարկված պարտատոմսերի պորտֆելը հասել է 12.2 մլրդ դրամի:
- ✓ **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** գերազանցել են 10.9 մլրդ դրամը, ավելանալով 9%-ով, զուտ տոկոսային մարժան կազմել է տարեկան 3.9%:
- ✓ **ԶՈՒՏ ԿՈՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են 2.9 մլրդ դրամ՝ ավելանալով գրեթե 33%-ով:
- ✓ **ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԸ** կազմել է 17.5 մլրդ դրամ՝ գերազանցելով 2020թ. ցուցանիշը 19%-ով:
- ✓ **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ** կազմել է 30.8 մլրդ դրամ: Տարեվերջին կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 14.7%, ինչը գերազանցում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն մակարդակը (12%):
- ✓ 2021թ-ը Բանկն ամփոփել է 4,3 մլրդ դրամ բացասական ֆինանսական արդյունքով: Վնասի այս չափը Բանկի ղեկավարության գիտակցված քայլն է տնտեսական շահութաբերության նոր մակարդակի հասնելու ուղղությամբ: Պահուստին զուտ հատկացումների ծավալը կազմել է 13,1 մլրդ դրամ, մինչդեռ ֆինանսական արդյունքը մինչև պահուստավորումը և շահութահարկի վճարումը կազմել է մոտ 8 մլրդ դրամ:
  Վարկային պորտֆելի որակի բարելավման և խնդրահարույց վարկերի հետբերման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները մշտապես եղել են Բանկի ղեկավարության ուշադրության կենտրոնում, մասնավորապես ներդրվել են հավաքագրման նոր մեխանիզմներ, կատարելագործվել է հաշվետվական համակարգը: 2021թ-ին փաստացի հետբերման ծավալը կազմել է շուրջ 4,6 մլրդ դրամ: 2021 թվականի ընթացքում բռնագանձվել և Բանկին ի սեփականություն է գրանցվել 30 միավոր անշարժ

գույք՝ մոտ 358 մլն դրամ ընդհանուր հաշվեկշռային գումարի, վաճառվել է 47 միավոր անշարժ գույք՝ մոտ 1 մլրդ դրամ ընդհանուր գումարի:

Կորպորատիվ բիզնես

2021 թվականին Յունիբանկը շարունակել է մասնագիտանալ փոքր և միջին բիզնեսի սպասարկման ոլորտում: Բանկը եղել է տնտեսության այս հատվածի միջազգային ֆինանսավորման ծրագրերի ակտիվ մասնակից: Ընդլայնելով համագործակցությունը գերմանական KfW զարգացման բանկի հետ՝ Յունիբանկը նախաձեռնել է գյուղատնտեսության ոլորտին աջակցելու վարկավորման ծրագիր: Վարկավորման բիզնես գործընթացն օպտիմալացնելու նպատակով աշխատանքներ են տարվում միկրովարկերի սքորինգային համակարգում արհեստական բանականության տեխնոլոգիան ներդնելու ուղղությամբ, ինչը զգալիորեն կխնայի աշխատանքային և ժամանակային ռեսուրսները:

Ֆինանսական անկայունության պայմաններում կորպորատիվ բիզնեսի հիմնական խնդիրն էր կենտրոնանալ բիզնեսի առավել ցածր ռիսկային հատվածների վարկավորման վրա, պահպանելով վարկային պորտֆելի ծավալը, շեշտը դնելով բարեխիղճ վարկառուների և վերջիններիս համապարփակ սպասարկման համար հարաբերությունների զարգացման վրա:
Տարեվերջի դրությամբ կորպորատիվ վարկերի ծավալը Բանկի ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 43%, կամ 60 մլրդ դրամ, պորտֆելը դիվերսիֆիկացված է Բանկի վարկավորման քաղաքականությամբ սահմանված նիշային հատվածներով:

Իրավաբանական անձանց ժամկետային ավանդների պորտֆելը նվազել է 27%-ով և կազմել 13,1 մլրդ դրամ: Ընթացիկ հաշիվներին դրամական միջոցների ծավալը գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով 61,4 մլրդ դրամի:

Մանրածախ բիզնես

Մանրածախ բիզնեսի զարգացումը Բանկի համար շարունակել է առաջնահերթություն մնալ նաև 2021 թվականին:

Սպառողական պահանջարկի վերականգնումը հանգեցրեց վարկավորման աճին, սակայն ընդհանուր մանրածախ պորտֆելի գրանցված նվազումը պայմանավորված է Բանկի՝ ակտիվների որակը զգալիորեն բարելավելու և արդյունավետության նոր մակարդակի հասնելու ռազմավարությամբ, այդ թվում՝ վարկերի գծով լրացուցիչ պահուստների ստեղծման միջոցով: Հաշվետու տարվա 2-րդ եռամսյակից վարկառուների կարգապահության բարելավում է նկատվում, ժամկետանցների տեսակարար կշիռը եղել է 5,8%-ի սահմաններում: Ֆիզիկական անձանց վարկերի պորտֆելը տարեվերջին կազմել է ավելի քան 78,4 մլրդ դրամ:

Տրամադրումների ծավալի նկատելի աճ է ապահովվել անշարժ գույքի գրավադրմամբ սպառողական վարկերի գծով: Մի շարք խոշոր մանրածախ ցանցերի հետ ամուր հարաբերությունները, նորարարական ավտոմատացված համակարգը պահպանել են Յունիբանկի առաջատար դիրքերը տրամադրված POS-վարկերի քանակով: Արհեստական բանականության տեխնոլոգիայի կիրառմամբ 2021թ. ուսումնասիրվել է ավելի քան 400.000 վարկային հայտ, այս ոլորտում Բանկին բաժին է ընկնում շուկայի ավելի քան 21%-ը: Հաշվետու տարվա 4-րդ եռամսյակում Յունիբանկը Հայաստանում առաջատար է ճանաչվել ինչպես POS-վարկերի քանակով, այնպես էլ ծավալով:

Երկրում բնակարանաշինության զարգացման հետ մեկտեղ հիփոթեքը դարձավ մանրածախ վարկավորման նիշային գործիք, այդ վարկերի պորտֆելը կազմել է 11,3 մլրդ դրամ, ընդ որում այս պորտֆելով գրանցված է ժամկետանցի ամենացածր տոկոսը՝ 1,8%:

Գնալով ընդառաջ վարկային պարտավորությունների սպասարկման ընթացիկ դժվարություններ ունեցող հաճախորդներին՝ Բանկը շարունակել է առաջարկել վարկերի վերակառուցման և

վերաֆինանսավորման համար օպտիմալ լուծումներ: Մանր սպառողական վարկերի գծով վերակառուցման ծավալը կազմել է 3,5 մլրդ դրամ:

Մանրածախ հաճախորդների դրամական միջոցներն աճել են 11%-ով և կազմել 119,2 մլրդ դրամ, այդ թվում ժամկետային ավանդների պորտֆելն աճել է 20%-ով՝ կազմելով 105,5 մլրդ դրամ, իսկ ցպահանջ միջոցների ծավալը կազմել է 13,7 մլրդ դրամ՝ 2020 թվականի 19,4 մլրդ դրամի դիմաց:

Կորպորատիվ կառավարում

Խորհրդի և գործադիր մարմինների աշխատանքը օպտիմալացնելու նպատակով Բանկը նախաձեռնել է կորպորատիվ կառավարման բարեփոխում: Ղեկավար մարմինների պատասխանատվության ոլորտների և հաշվետվողականության համակարգի վերանայման շրջանակներում Վարչությանը վերապահվել են Խորհրդի որոշ լիազորություններ:

Բանկի արդյունավետ գործունեությունն ապահովելու գործում ղեկավար մարմիններին աջակցում են հետևյալ հանձնաժողովները՝ Խորհրդին կից. Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով, Ներդրումային հանձնաժողով, Պարգևատրումների հանձնաժողով, Վարչությանը կից. Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողով, Սակագնային հանձնաժողով, Անձնակազմի գնահատման հանձնաժողով, Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողով, Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողովը:
Արդյունավետորեն գործում են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովը, Վարկային կոմիտեն, Մրցութային հանձնաժողովը, Վարկային սքորինգի հանձնաժողովը:

Կադրային քաղաքականություն

2021 թվականի կադրային քաղաքականության հիմքում Բանկը ավանդաբար սահմանել է մասնագետների արդյունավետ թիմի պահպանումը, կարիերայի աճի հեռանկարը, երիտասարդ կադրերի ներգրավումն ու զարգացումը, անձնակազմի նյութական խրախուսումը: Զանգվածային միջոցառումների մասով հակակովիդյան սահմանափակումների վերացումից հետո վերսկսվել են ուսուցողական սեմինարները, անձնակազմի ատեստավորումները, ներկորպորատիվ միջոցառումները և միջկորպորատիվ սպորտային մրցումներին մասնակցությունը:
2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատողների թիվը կազմել է 792 մարդ:

Համապատասխանություն օրենսդրության պահանջներին

Բանկում գործում է Համապատասխանության դեպարտամենտ, որի հիմնական նպատակն է աջակցել ղեկավարությանը՝ ապահովելու Բանկի գործունեության համապատասխանությունը օրենսդրության, կարգավորող մարմինների նորմատիվ ակտերի և Բանկի ներքին իրավական փաստաթղթերի պահանջներին: Համապատասխանության գործառույթը կենտրոնացված էր փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում հսկողության խստացման վրա: Հաշվետու տարվա ընթացքում վերախմբագրվել է թվով 60 ներքին իրավական ակտ: Նաև Բանկի աշխատակիցների համար խորհրդակցություններ են անցկացվել հակակովիդային կանոնների և պահանջների պահպանման վերաբերյալ:

2022 թվականի ռազմավարական առաջնահերթությունները

Բանկի զարգացման ռազմավարությամբ սահմանված առաջնահերթություններն ուղղված են Բանկի գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ հետևյալ հիմնական խնդիրների լուծման միջոցով.

- ✓ բաժնետերերի կառուցվածքի ընդլայնում և դիվերսիֆիկացում, 5 մլրդ դրամ ծավալով սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով կապիտալի ներգրավում,

- ✓ միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցության զարգացում, Բանկի ֆինանսական ծառայությունների շրջանակն ընդլայնելու համար արտաքին ռեսուրսների օգտագործում,

- ✓ մանրածախ վարկավորման շուկայում Բանկի մասնաբաժնի ավելացում,

- ✓ որպես երկարաժամկետ համաշխարհային միտում «կանաչ» ֆինանսավորման փորձի կիրառումը,

- ✓ ֆինանսական տեխնոլոգիաների զարգացումը (արհեստական բանականության կիրառում փոքր բիզնեսի վարկավորման գործում, մարքեթփլեյսի հարթակի և էլեկտրոնային առևտրի գործարկում, հեռահար բանկային համակարգերի զարգացում),

- ✓ տրանզակցիոն եկամուտների աճի նոր գործիքակազմի մշակում,

- ✓ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մեխանիզմների կատարելագործում և լավագույն փորձի ներդրում:

Գիտակցելով տնտեսական զարգացման ներկայիս իրողությունները և մարտահրավերները՝ մենք վստահորեն նայում ենք ապագային և շարժվում դեպի մեր ռազմավարական նպատակների իրականացումը:

Եզրափակելով՝ Բանկի Վարչության անունից թույլ տվեք շնորհակալություն հայտնել բաժնետերերին աջակցության և վստահության համար, հաճախորդներին և գործընկերներին՝ արդյունավետ համագործակցության համար, ինչպես նաև երախտագիտություն եմ հայտնում Յունիբանկի թիմին պրոֆեսիոնալիզմի և նվիրվածության համար:

Մեսրոպ Հակոբյան

Վարչության նախագահ

08.06.2022թ.